ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐՏԻ ՄԱՐԶ
ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն,Արարատի մարզի Նարեկ համայնք
Հեռ./099-43-57-45/, էլ փոստ. narekhamaynq@.mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

27 նոյեմբերի, 2013 թվական, N34 Ն

ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2014Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒԼՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՆԱՆ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով՝

Համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Նարեկ համայնքի 2013թ. տեղական տուրքերի և վճարների հետևյալ սահմանումները, համաձայն «Տեղական տուրքերի և վճարների» մասին ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջներին:

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների / ներառյալ ոչ հիմնական / շինանարարության թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է .

Հիմնական օբյեկտների համար

ա) մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անահատական բնակելի , այդ թվում՝այգեգործական /ամառանցային/ տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակություն ունեցող օբյեկտների համար՝ 10000 դրամ:

բ) սույն կետի « ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար

1. 201 – ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ:
2. 501 – ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 25000 դրամ
3. 1001 – ից ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտներi համար՝ 35000 դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար

գ) մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ.
դ) 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի և շինությունների , քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնմա, արդիկանացման աշխատանքների / բացառությամբ << օրենսդրությամբ սահմանված շին. թույլտվություն չպահանջող դեպքերի / համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով:

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում, կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար՝ 5000 դրամ:

Սահմանված դրույքաչափերը հաստատված են 0.5 գործակցի կիրառմամբ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է

ա) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքնչյուր եռամսյակի համար ՝ 10000 դրամ:

բ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար ՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմաերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար ՝ 10000 դրամ:

5. Համայնքի տարածքում

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանրյուր օրվա համար 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար:

5. բ) «Հեղուկ վառելիքի սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների» վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է հարյուրհիսուն հազար /150000/ դրամ:

6. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 1 քմ-1000 դրամ:

7. Աճուրդների և մրցույթների մասնակցության վճար սահմանել 1000 դրամ:

8. Համայնքում փաստացի բնակվող յուրաքանչյուր մեկ շնչի համար աղբահանության վճար սահմանել ամսեկան՝ 100 դրամ:

ԱԿԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Գ.Ամրոյան

Ս.Սարգսյան

Կ.Մովսիսյան

Պ.Գևորգյան

Կ/Տ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

/ստորագրություն/ Գ.ՀԱԿՈԲՅԱՆ

/անուն ազգանուն/